ԵՐԵՎԱՆԻ ԼԵՌՅԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱՐ 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱՆ՝ Ղազարոս Աղայանը աշխատանքային դաստիարակության մասին

ԱՌԱՐԿԱՆ՝ Հայոց լեզու և գրականություն

ԿԱԶՄԵՑ՝ Երևանի Մ. Գալշոյանի անվան հ. 148 ավագ դպրոցի ուսուցչուհի Սուսաննա Կարապետյան

ՂԵԿԱՎԱՐ՝ Անուշ Աբելյան

ԵՐԵՎԱՆ 2022թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի ու աշխատանքային դաստիարակության մասին ուսանելի դրույթներ կան Ղազարոս Աղայանի գրական-մանկավարժական հարուստ ժառանգության մեջ: Այսօր էլ բոլորիս համար ուսանելի է ականավոր մանկավարժի ճշմարիտ դրույթն այն մասին, որ «աշխատությունը բոլոր առաքինությունների մայրն է, ինչպես ծուլությունը ծնող է ամենայն մոլորության»[1]:

I

Ղ. Աղայանը դաստիարակության հիմնական նպատակն էր համարում մարդու համակողմանի-ներդաշնակ զարգացումը, որը հնարավոր չէ պատկերացնել առանց աշխատանքային դաստիարակության, առանց ֆիզիկական պատշաճ զարգացման: Ահա թե այդ կապակցությամբ ինչ է գրել Ղ. Աղայանը. «Խորհրդածություններիս մեջ այն միտքն էի ուզում տարածել, ինչ որ պահանջում էր նորագույն մանկավարժությունը, թե մարդուս բարոյական, մտավոր և ֆիզիկական կողմերի զարգացման մեջ պետք է ներդաշնակություն լինի, կամ՝ որ նույնն է՝ հոգու, մտքի և մարմնի մեջ: Այդպես էլ գրեցի ես»[2]:

Մարդու «բարոյական, մտավոր և ֆիզիկական» կողմերի համակողմանի-ներդաշնակ զարգացմանը նպաստող միջոցների համակարգում Ղ. Աղայանը առաջնությունը տալիս է աշխատանքին: Երբ Ղ. Աղայանը սկսեց խմբագրել «Արարատ» ամսագիրը, հենց այդ ոգով էլ գրեց նրա առաջին համարի առաջնորդողը. «Առաջին իսկ համարում մի առաջնորդող գրեցի,_ գրում է Ղ. Աղայանը,_ «Աշխատություն» վերնագրով, որի մեջ ցույց տվի, թե որպիսի ուղղություն պիտի ունենա «Արարատը», թե ընդհանուր տիեզերքը շարժման մեջ է, ուրեմն մենք ևս պիտի շարժինք, պիտի աշխատինք, թե աշխատությունը մարդուս համար մեծ անեծք չէ, ինչպես կարծում են, այլ օրհնություն»[3]:

Ահա թե ինչու հայ ականավոր մանկավարժ ու գրող Ղ. Աղայանը իր մանկավարժական հարուստ ժառանգության մեջ, ինչպես նաև իր ուսուցչական բեղմնավոր գործունեության ընթացքում մեծ նշանակություն է տվել հասունացող սերնդի աշխատանքային դաստիարակությանը: Այս տեսակետից ուսանելի է հենց իր՝ Ղ. Աղայանի կենսագրությունը այն առումով, որ շատ վաղ տարիքից նա իր հանապազօրյա հացը սկսել է վաստակել սեփական քրտինքով՝ աշխատելով որպես գրաշար Թիֆլիսի և Պետերբուրգի տպարաններում: Իր աշխատանքային գործունեության առաջին տարիները շատ լավ պատկերված են Ղ. Աղայանի կենսագրական նոթերում և «Հարութին և Մանվել» ինքնակենսագրական բնույթի երկում:

Ելնելով իր փորձից՝ Ղ. Աղայանը գտնում է, որ մարդկանց նյութական և հոգեկան բոլոր հարստությունների աղբյուրը աշխատանքն է: Այն անչափ բարերար է ազդում հատկապես մարդկանց բարոյական հատկությունների ձևավորման վրա: Հետևապես պետք է վաղ հասակից երեխային պատվաստել աշխատանքային ունակություններ, նրան նախապատրաստել աշխատանքային գործունեության համար, տալ որոշակի արհեստ կամ մասնագիտություն:

Դեռևս իր «Տորք Անգեղ» պոեմում Ղ. Աղայանը արտահայտել է սոցիալական գաղափարներ, ցույց տվել «համայնքում» մարդկանց ազատ աշխատանքի բերկրանքը: Նրա պատկերած համայնքում բոլորն էլ սիրով աշխատում են, գիտեն մի քանի արհեստներ: Այստեղ մարդը մարդուն եղբայր է, ընկեր: Նա գրել է. «Եթե ամեն ոք աշխատե ամենքի համար, նա դրանով բարեկամական դիրք կբռնե դեպի ամենքը... Առաջ կգա սեր, միություն, եղբայրություն, մի խոսքով՝ մարդավայել կյանք և երջանկություն»[4]:

Հայ լուսավորիչ-դեմոկրատ Ղ. Աղայանը հասարակության զարգացման աղբյուրը համարել է գիտությունն ու լուսավորությունը, սակայն դրա հետ միասին չի անտեսել նաև տնտեսական գործոնի դերը: Ըստ Աղայանի՝ «Ժողովրդի բարոյական վիճակը նրա տնտեսական վիճակից կախում ունի, իսկ տնտեսական բարեկեցությունը՝ նրա համայնական սեփականությունից»[5]:

Ղ. Աղայանի նկարագրած «համայնքում» մարդիկ աշխատասեր են, զբաղվում են մեղվաբուծությամբ, շերամապահությամբ, գինեգործությամբ, հողագործությամբ և անասնապահությամբ: Այդ «համայնքում» աշխատավորների նյութական բարեկեցությունը որոշվում է ամբողջ հասարակության բարեկեցությամբ, իսկ հասարակական շահերը ներդաշնակորեն համընկնում են անհատական շահերի հետ:

Հավատի և մարդու աշխատանքային գործունեության փոխհարաբերության հարցում Ղ. Աղայանը իր քննադատությամբ չի խնայել նույնիսկ անբան հոգևորական միաբանությանը, որը, «երեսի քրտինքով հաց ուտելու սովոր չէր, չէր աշխատում, չէր սովորում, չէր ինքնակրթվում»[6]:

Ականավոր մանկավարժը գտնում էր, որ աշխատանքային դաստիարակության բնագավառում ևս պիտի օգտագործել հայ ժողովրդի շինարարական փորձը, բնակարանաշինության, ճարտարապետության դարավոր փորձը, ուսանելի ավանդույթները: Ղ. Աղայանը նկատում է, որ հայ շինականների քրտնաջան աշխատանքի արդյունքն են նրանց կերտած եկեղեցիները, ճարտարապետական կոթողներն ու հուշարձանները, որոնք պիտի աչքի լույսի պես պահպանել:

II

Աշխատանքային դաստիարակության հարցերին Ղ. Աղայանը անդրադարձել է ոչ միայն իր «Խորհրդածություններ դաստիարակության վերա» աշխատության մեջ, այլև իր գեղարվեստական ստեղծագործություններում, իր կազմած «Մայրենի լեզվի» դասագրքերում՝ այնտեղ զետեղելով աշխատանքային թեմայով պատմվածքներ, ոտանավորներ, հեքիաթներ:

Դեռևս XIX դարի 70-ական թվականներին Ղ. Աղայանը գտնում էր, որ ուսուցման և արտադրական աշխատանքի զուգորդումը պիտի լինի մանկավարժության անխախտ սկզբունքը: Արտադրական ուսուցումը դիտելով որպես

բարոյական դաստիարակության կարևոր գործոն՝ Աղայանը պահանջում է սերտ կապ ստեղծել ուսուցման և արտադրողական աշխատանքի միջև, մի պահանջ, որ առաջադրել են դեռևս ուտոպիստ սոցիալիստները և դասական շատ մանկավարժներ:

Ղ. Աղայանը գտնում է, որ երեխաների դպրոցական կրթությունը պետք է զուգակցվի արհեստներ սովորեցնելու հետ: Դպրոցական մտավոր կրթության հետ զուգորդված աշակերտները պիտի արհեստներ սովորեն դպրոցներին կից կազմակերպված տարբեր տիպի արհեստանոցներում: Նա գրել է. «Յուրաքանչյուր դպրոցին կից պետք է լինի արհեստանոց, եթե աղջկանց դաստիարակության մեջ ձեռագործությունն անհրաժեշտ հարկավոր է համարվում, որքան առավել հարկավոր պիտի համարվի տղայոց մի որևիցե արհեստ իմանալը»[7]: Ականավոր մանկավարժի այս պահանջը անչափ այժմեական է հնչում:

Ըստ Աղայանի՝ արհեստի միջոցով մարդը հնարավորություն կունենա վաստակելու իր հանապազօրյա հացը: Եվ չպետք է զարմանալ, որ Ղ. Աղայանը արհեստի գովքը իր գագաթնակետին հասցրեց «Անահիտ» հոյակապ հեքիաթում, որ սերունդներ է դաստիարակել աշխատասիրության ոգով:

Ղ. Աղայանը արհեստների ուսուցումը ոչ միայն տնտեսական տեսակետից է նպատակահարմար ու հեռանկարային համարում, այլև բարոյական դաստիարակության առումով. «Գործելը միայն գրելը չէ և կարդալը, որ մտածելու հետ սերտ և անբաժան կապակցություն ունին,- գրում է Աղայանը,- այլև այնպիսի գործ, որ հանգստություն է տալիս այլ զգացմունքներին և ժամանակ է տալիս նոցա շունչ քաշելու և զորանալու»[8]: Այդպիսի գործ նա համարում էր արհեստները, այն արհեստները, որոնց կարիքն զգում է մեր ժողովուրդը, քանզի «դաստիարակության կերպը պետք է ազգի վիճակին հարմարեցնել... հարկավորություն չկա կուրորեն հետևելու օտար ազգաց»:

Աշխատանքը Ղ. Աղայանը իրավացիորեն համարում է կյանքի բնական և անհրաժեշտ պահանջ, աշխատանքն է, որ մարդուն մարդ է դարձրել, աշխատանքի շնորհիվ է, որ մարդ արարածը առանձնացել է անասնական աշխարհից. «Այն մարդիկ, որ չեն աշխատում,- գրում է Աղայանը,- նրանք նման են անասունի, և եթե

մարդ այնքան չի աշխատում, որ անհրաժեշտ է իր գոյության համար, նրան պետք է նմանեցնել ցեցի, որ առանց աշխատության ուտում է ուրիշի աշխատանքը»[9]:

Դատապարտելով պորտաբուծությունը՝ Ղ. Աղայանը պատկերավոր շարունակում է իր խորհրդածությունը. «ծառը իր պտղովը, ծաղիկը իր հոտովը, մեղուն իր մեղրովը, շերամն իր մետաքսովը, բոլոր-բոլոր անբան արարածներն անգամ ակնհանդիման ատում են ծուլությունը, որ մայր է ամենայն չարությանց և ապացուցանում աշխատության անհրաժեշտ կարևորության և երջանկության միակ աղբյուր լինելը»[10]:

Ըստ Ղ. Աղայանի՝ որքան աշխատանքը գիտակցական բնույթ է կրում, այնքան մարդ ավելի երջանիկ կարող է լինել: Կրթության և լուսավորության նպատակը այն պիտի լինի, որ հասարակության անդամն զգա օգտակար աշխատանքի անհրաժեշտությունը և կարևորությունը: Մտքի, բանականության գերիշխանության հաստատում՝ թե անհատի և թե հասարակության կյանքում՝ ահա ուսուցման և դաստիարակության նպատակի աղայանական ըմբռնումը:

Ղ. Աղայանի կարծիքով աշխատանքը հասարակության գոյության և զարգացման մշտական անհրաժեշտ պայմանն է: Սակայն աշխատանքի նշանակությունը միայն նրա նյութական արդյունքը չէ, որը գոյության և զարգանալու հնարավորություն է տալիս հասարակությանը: Աշխատանքը մեծ դեր է խաղում մարդու բարոյական կերպարի ձևավորման գործում: Ըստ Աղայանի՝ միմիայն աշխատանքում կարող է բացահայտվել մարդու իսկական գեղեցկությունը, կերտողի և մտածողի գեղեցկությունը: Աշխատանքում է կոփվում մարդու կամքը, նրա բնավորությունը: Մարդը, թրծվելով աշխատանքի բովում, անխոցելի է դառնում կյանքի բարդ պայմաններում: Աշխատանքը մարդուն դարձնում է բարոյապես առաքինի:

Ինչպես նշեցինք, ինքը՝ Ղ. Աղայանը, վաղ տարիքից սկսեց իր աշխատանքային գործունեությունը, սովորեց հատկապես գրաշարի պատվաբեր արհեստը: Իր սաներին, իր զավակներին Ղ. Աղայանը դաստիարակել է աշխատասիրության ոգով, գտնելով, որ աշխատանքը բոլոր բարոյական առաքինությունների աղբյուրն է: Այս առումով ուշագրավ է ձեռագործություն նոր

սովորող իր աղջկան՝ Անահիտին, 1901 թվականին գրած նամակը. «Ես ընդդեմ չեմ ձեռագործ սովորելուդ, ընդհակառակը, շատ ուրախ եմ: Դու գտնում ես, որ այդ արվեստը կարող է ժամանակին օգուտ տալ քեզ նյութապես, իսկ ես բացի նյութականը նկատի ունեմ և գործի բարոյական կողմը: Աշխատությունը բոլոր առաքինությունների մայրն է, ինչպես ծուլությունը ծնող է ամենայն մոլության: Անգործ մնացող հողի վրա բսնում են ամեն տեսակ անպիտան խոտեր, իսկ մշակվող հողը, որ նպատակ ունի շատերին սնունդ տալու իր բերքովը, զարդարվում են ամեն տեսակ բարիքով»[11]:

Ղ. Աղայանի գրական ստեղծագործություններում ևս որոշակի տեղ են գրավում նաև աշխատանքային և գեղագիտական դաստիարակության փոխադարձ կապի հարցերը: Նա հաստատել է, որ գեղեցկություն հասկացության հիմքը պետք է փնտրել աշխատանքում, հենց աշխատանքի մեջ է կյանքի իմաստը: Մարդու կյանքը լիարյուն և գեղեցիկ է դառնում ոչ միայն նյութական, այլև գեղագիտական պահանջմունքների բավարարման ժամանակ: Ղ. Աղայանը ցույց է տալիս, թե ինչպես աշխատանքը գեղեցկացնում է մարդուն: Նա այն գաղափարին էր, որ գեղեցիկ է միայն ազատ աշխատանքը, որը նյութական ու հոգևոր օգուտ է բերում մարդկանց: Երեխաների գեղագիտական դաստիարակությունը պիտի զուգակցված լինի աշխատանքային գործունեության հետ. նրանք պիտի գեղեցիկը ընկալեն բուն աշխատանքի գործընթացում:

Գեղագիտական և աշխատանքային դաստիարակության փոխադարձ կապի գաղափարը մարմնավորված է հատկապես Ղ. Աղայանի գեղարվեստական երկերում, հեքիաթներում և բանաստեղծություններում:

Ղ. Աղայանը իր հոդվածներում արծարծել է նաև ուսումնական աշխատանքի գիտական կազմակերպման հարցերը, մատնանշել, որ ուսումնադաստիարակչական բոլոր աշխատանքները պիտի կազմակերպել երեխաների տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելու սկզբունքով:

Այսօր էլ ընդունելի է Ղ. Աղայանի այն պահանջը, որ ամեն մի ուսուցիչ պիտի լավատեղյակ լինի մանկավարժությանն ու մանկավարժական

հոգեբանությանը, որպեսզի երեխաներին տա մատչելի աշխատանքային հանձնարարություններ:

III

Ղ. Աղայանը աշխատանքի, աշխատասիրության ու արհեստների գովքն է արել նաև իր պատմվածքներում, ոտանավորներում և հեքիաթներում: «Ծառերի գանգատը» պատմվածքը սկսվում է ծառերի գանգատով. «Մեր տված փայտից կրակ են անում, տուն տաքացնում, թոնիրը վառում, կերակուր եփում, փափուկ հաց թխում, ուտում կշտանում, բայց մեզ չեն հիշում, մեզ չեն պահպանում, այլ անգութ կերպով մեզ կոտորում են, մեզ փչացնում, ոչնչացնում»[12]: Եվ այսպես ծառերը շարունակում են գանգատվել, թե փայտից ինչեր ասես, որ չեն պատրաստում, մինչդեռ «ծառերը չեն պահպանվում»: Կամ ծառերը տեսակ-տեսակ միրգ են տալիս, բայց մարդիկ էլի չեն խնայում, կտրատում են ծառերը: Դաստիարակչական առումով ուշագրավ է պատմվածքի վերջաբանը աշխատասիրության ու բնապահպանության առումով. «Խելոք մանուկներ, դուք որ մեծանաք, մեծ մարդիկ դառնաք, մեզ խնայեցեք, մեզ պահպանեցեք և ձեր հանդերում, ձեր այգիներում ծառեր տնկեցեք»[13]:

«Ծույլ տղա» պատմվածքում խարազանվում է Թորոսի ծույլ տղան, որը «փնթփնթում» է մի շարք արհեստների օգտակարության ու դժվարության մասին, բայց վախենալով դժվարություններից՝ ծույլ տղան «ոչ մի արհեստ էլ չի հավանում»:

«Այգեքաղ» պատմվածքը յուրօրինակ գովք է խաղողաքաղի մասին: Այգեքաղին սիրով մասնակցում են գյուղի երեխաները, օգնում իրենց ծնողներին:

«Ոսկի և երկաթ» պատմվածքում հակադրված են ոսկու և երկաթի հատկությունները, ցույց են տրված երկաթից պատրաստած գործիքների ու առարկաների դերն ու նշանակությունը մարդու աշխատանքում: Այսպես, օրինակ, ոսկին պարծենում է, որ օրիորդները սիրում են ոսկի զարդ ու զարդարանք, մինչդեռ երկաթից էլ ոչ մի զարդ չեն պատրաստում: Դրան հետևում է հետևյալ

պատասխանը. «Իմ մի փոքրիկ ասեղը քո բոլոր զարդարանքներից ավելի է օգուտ տալիս: Իմ փոքրիկ ասեղը քանի տուն է պահում, քանի որբի կերակրում: Իմ խոփն ու ձևիչը ամբողջ աշխարհին հաց են տալիս»[14]: Այսպես գովերգվում են երկաթագործության հետ կապված մի շարք արհեստներ:

Ղ. Աղայանը աշխատանքի գովքն է կատարել իր բազմաթիվ բանաստեղծություններում, որոնք մանուկ ու պատանի ընթերցողների մեջ սեր են դաստիարակում աշխատանքի, տարբեր տիպի արհեստների նկատմամբ: Բերենք միայն մի քանի օրինակ Ղ. Աղայանի չափածո գործերից: Ղ. Աղայանի մի շարք բանաստեղծություններ ունեն սոցիալական մոտիվներ, և եթե չարքաշ գյուղացին չունենար արհեստ, չմշակեր հողը, անասուններ չպահեր, օրնիբուն չաշխատեր, ապա չէր կարող պահպանել ընտանիքի գոյությունը: Ահա հայ գեղջկուհու «տունը պահող» ճախարակը: Համանուն հիանալի բանաստեղծության մեջ հայ գեղջկուհին, դիմելով ճախարակին, խնդրում է.

Մանի՛ր, մանի՛ր, իմ ճախարակ,
Մանիր սպիտակ մալանչներ,
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հոգամ իմ ցավեր:

Եվ միանգամայն հասկանալի է երեխաներին, որ եթե հայ գեղջկուհին արհեստ չունենար, չիմանար մանել, գործել, ապա չէր կարող իր Տիգրանիկի համար գուլպա, Գաբրիելի համար չուխա գործել կամ չէր կարող պատասխան տալ պարտատիրոջը:

Նույնը կարելի է ասել նաև «Սերմնացան» բանաստեղծության մասին: Այստեղ էլ խեղճ գյուղացին է բողոքում, որ ամբողջ տարին աշխատում է, մինչդեռ պարտատերը գալիս-տանում է.

Մի տուն լիքը երեխեքս մերկ, քաղցած,
Տարին առատ, բայց ես չունիմ կորեկ հաց:

Այլաբանական իմաստ է կրում Ղ. Աղայանի «Հիշողություն» հիանալի բանաստեղծությունը: Քանի-քանի անգամ «արյունարբու թշնամին» քանդել է հայի տունը, սակայն հայ շինականը նորից է կառուցել, կանգուն պահել հայրենի տունը՝

չմոռանալով կառուցողական-ավանդական անցյալը: Ահա այդ գաղափարն է այլաբանորեն մարմնավորված «Հիշողություն» բանաստեղծության մեջ.

Ծիծեռնակը բույն էր շինում,
Եվ շինում էր, և երգում,
Ամեն մի շյուղ կպցնելիս՝
Առաջվան բույնն էր հիշում:
Նա հիշում էր անցած տարին
Իր սնուցած ձագերին,
Որոնց ճամփին հափշտակեց
Արյունարբու թշնամին:
Բայց նա կրկին բույն էր շինում
Եվ շինում էր, և երգում,
Ամեն մի շյուղ կպցնելիս՝
Առաջվան բույնն էր հիշում:

Երեխաները առանձին հետաքրքրությամբ են սովորում և արտասանում Ղ. Աղայանի «Պարտիզպան», «Մանուշակ», «Հնձվորներ» և այլ ոտանավորներ, որոնք երեխաներին ճանաչողական նյութ տալու հետ միասին նպաստում են նրանց աշխատասիրության ոգով դաստիարակելուն:

Կրթադաստիարակչական նման նպատակներ են հետապնդում նաև Ղ. Աղայանի մշակած հիանալի հեքիաթները: Այս տեսակետից հիշատակության է արժանի հատկապես «Անահիտ» հեքիաթը, որը մարդու կյանքում աշխատանքի, արհեստների վճռական դերի ու նշանակության մասին մի հոյակապ պատմություն է: Ինքը՝ Ղ. Աղայանը, լավ է մեկնաբանել «Անահիտ» հեքիաթի բուն էությունը, նրա դաստիարակչական նշանակությունը. «Այդ հեքիաթի գլխավոր միտքը այն է, որ թագավորի կյանքը արհեստն է փրկել: Այս լավ միտք է, և ինչ ժողովրդի մեջ գտնվում է մի այսպիսի սրբացած ավանդություն, դա ցույց է տալիս, թե ուրեմն այն ժողովուրդը մեծ նշանակություն է տալիս արհեստներին, աշխատասիրությանը, որից գլխավորապես կախված է ժողովրդի բախտավորությունը»[15]:

Ղ. Աղայանը ժողովրդական այդ իմաստության հիման վրա կատարում է հետևյալ ընդհանրացումը, որը գիտամանկավարժական առումով անչափ այժմեական է հնչում. «Ուսումն ու արհեստը պետք է այնպես հյուսված լինեն միասին, ինչպես Վաչագան թագավորի դիպակը իր խորհրդավոր թալիսմաններով»[16]: Մեր օրերում էլ անչափ ուսանելի է «Անահիտ» անզուգական հեքիաթի իմաստուն խորհուրդը.

Ամեն հոգի, ամեն անհատ,
Եթե ունի արհեստ, ուսում,
Նա չի լինի սնանկ, աղքատ՝
Վտանգալից մեր աշխարհում:

Աշխատանքի, արհեստների դաստիարակչական դերի ու նշանակության մասին հայ ականավոր մանկավարժ Ղ. Աղայանի վերոհիշյալ և այլ դրույթներ այսօր էլ պահպանում են իրենց թարմությունը և կարող են տեսական ու գործնական օգնություն ցույց տալ ծնողներին և ուսուցիչներին...

Եզրակացություն

Ավանդույթը տվյալ ժողովրդի, համայնքի, ընտանիքի կամ աշխատանքային կոլեկտիվի մեջ ամրակայված և սերնդից սերունդ հաղորդվող (կամ փոխանցվող) սովորույթն է, վարքի ամրակայված չափօրինակը: Ավանդույթները լինում են առաջադիմական և հետադիմական: Ինքնին հասկանալի է, որ դաստիարակչական ակտիվ դեր են կատարում միայն առաջադիմական ավանդույթները՝ հայրենասիրական, մարտական, ժողովուրդների բարեկամության, մշակութային, աշխատանքային և այլ ավանդույթներ, որոնց լայն տեղ են տվել ականավոր մանկավարժները իրենց աշխատություններում ու պրակտիկ մանկավարժական գործունեության ընթացքում:

Ոչ միայն աշխատանքային, այլև ազգային ու ժողովրդական առաջադիմական ավանդույթների ու սովորությունների դաստիարակչական կարևոր դերի մասին արժեքավոր դրույթներ են զարգացրել հայ ականավոր շատ մանկավարժներ ու գրողներ՝ Խ. Աբովյանը, Միք. Նալբանդյանը, Ղ. Աղայանը, Հովհ. Թումանյանը, Ռաֆֆին, Պերճ Պռոշյանը և ուրիշներ: Ի դեպ, ժողովրդական մանկավարժության մեջ արմատավորվել են նաև աշխատանքն ու աշխատանքային ավանդույթները դրվատող, ծուլությունը խարազանող ուսանելի շատ ասացվածքներ, որոնք կարելի է ստեղծագործաբար օգտագործել հատկապես աշխատանքային դաստիարակության գործընթացում: Նկատի ունենք՝ «Աշխատասիրությունը բոլոր առաքինությունների մայրն է», «Աշխատանքը ազնվացնում է մարդուն», «Աշխատանքը մայրն է ամենայն բարիքի», «Աշխատող խոփը չի ժանգոտի», «Արհեստավորը սոված չի մնա», «Աշխատանքը զարդարում է մարդուն», «Ով աշխատի, նա ուտի», «Տաշած քարը գետնին չի մնա», «Աշխատանքը բուժիչ բալասան է», «Ազնիվ աշխատանքով կարելի է ձեռք բերել ամեն ինչ», «Ամեն չարիք պարապությունից է գալիս» և նմանօրինակ բազում այլ ասացվածքներ:

Այսպիսով, մարդկային կեցության ամենաառաջնային պայմանը եղել ու մնում է աշխատանքը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ղ. Աղայան Երկերի ժողովածու, հ. 4, Երևան
2. Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1963, էջ 571:
3. Նույն տեղում, էջ 435:
4. Նույն տեղում, էջ 434:
5. Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1963, էջ 85-86:
6. Նույն տեղում, էջ 104-105:
7. Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1963, էջ 434:
8. Նույն տեղում, էջ 24:
9. Նույն տեղում, էջ 24:
10. «Արարատ», 1869թ., № 5, էջ 2:
11. Նույն տեղում:
12. Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1963, էջ 571:
13. Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1962, էջ 343:
14. Նույն տեղում, էջ 344:
15. Նույն տեղում, էջ 375:
16. Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1963, էջ 159:
17. Նույն տեղում, էջ 160:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Արարատ», 1869թ., № 5:
2. Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1962:
3. Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1963:
4. Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1963: